



**MILLENNIUM  
CHALLENGE  
CORPORATION**  
REDUCING POVERTY THROUGH GROWTH



**ՀԱՉԱՐԱՍՅԱԿԻ  
ՄԱՐՏԱԶՐԱՎԵՐ  
ՀԻՄՆԱԳՐԱՍ-ՀԱՅԱՍՏԱՆ**

## Ճանապարհային շինարարությունը սկսված է


2007 թվականի նոյեմբերի 9-ին Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ – Հայաստանը ազդարարեց Գյումրի-Երևան-Գյումրի վերականգնման ենթաձևի շինարարական աշխատանքների մեկնարկի մասին: Հ17 Արմավիր-Իսահակյան-Գյումրի ավտոճանապարհի 24,5 կիլոմետր երկարությամբ հատվածի վերականգնման



աշխատանքների մեկնարկն ազդարարվեց Արագածոտնի մարզի Գետափ գյուղի մոտ հանդիսավոր արարողությամբ, որին մասնակցեցին Հայաստանի վարչապետ Սերժ Սարգսյանը և Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի փոխնախագահ Դարիուս Մանսը:

Շահառու համայնքներից մեկի՝ Արագածավանի գյուղապետ Անդրանիկ Պապիկյանը մեծ հույսեր է կապում ծրագրի հետ. «Այնպիսով ենք, որ այս ծրագրի ավարտին Գյումրի տանող ճանապարհը առաջվա նման մարդաշատ կլինի, առաջվա պես կապ կհաստատվի մեր գյուղերի և Գյումրիի միջև: Մեր գյուղը Արագածոտնի մարզի ամենամեծ գյուղն է՝ 7200 բնակիչ ունի, որը անմիջապես կապ կստեղծի Գյումրիի հետ՝ առևտրային, մշակութային և մնացած բոլոր տեսակի կապերը կդառնան մատչելի»:

Հ17 Արմավիր-Իսահակյան-Գյումրի ճանապարհը Արագածոտնի մարզի մի շարք գյուղերը միացնում է Հայաստանի երկրորդ քաղաքին՝ Գյումրիին, որը նաև գյուղատնտեսական առումով երկրի հյուսիսային հատվածի խոշորագույն շուկան է: 2008թ-ի վերջին 9 գյուղական համայնք կհանդիսանան ՀՄՀ-Հայաստանի ճանապարհաշինության բաղադրիչի առաջին շահառուները: Շինարարությունն իրականացնում է «Գործնիկ» ՍՊԸ-ն, որը շինարարության բնագավառում մեծ փորձ և համբավ ունեցող տեղական ընկերություն է: «Գործնիկը» հաղթող է ճանաչվել մրցույթի արդյունքում՝ իր առաջարկը գնահատելով 1,502 մլն ՀՀ դրամ, ինչը համարժեք է 4.5 մլն ԱՄՆ դոլարի: Շինարարական այս նախագծի շինարարությունը կավարտվի 2008-ի դեկտեմբերի 15-ին:



/ճախից՝ աջ/ Մայրոն Հիրնիակ, ՀՄՀ Հայաստանի ծրագրի տնօրենի տեղակալ, Անդրանիկ Մանուկյան, ՀՀ Կապի և տրանսպորտի նախարար, Արա Հովսեփյան, ՀՄՀ-Հայաստանի Գ.Գ.Տ, Էսբեր Հակոբյան, ՀՄՀ-Հայաստանի Մոնիթորինգի և գնահատման ղեկավար, Դարիուս Մանս, ՀՄՀ փոխնախագահ, Սերժ Սարգսյան, ՀՀ վարչապետ, Գաբրիել Գյոզալյան, Արագածոտնի մարզպետ, Ալեքս Թասին, ՀՄՀ Հայաստանի ծրագրի տնօրեն՝ շինարարական աշխատանքների մեկնարկի արարողության օրը